ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 12-16-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Վարդան Արամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Վաշինգտոն, հոկտեմբերի 12-16-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Արժույթի միջազգային հիմնադրամ/Համաշխարհային բանկ (ԱՄՀ/ՀԲ)

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Արժույթի միջազգային հիմնադրամի/Համաշխարհային բանկի տարեկան հանդիպումներին.

- *Պլենար նստաշրջան*
- *Մասնակցություն ներդրողների և ներդրումային բանկերի հետ (JP Morgan, Deustche bank, Citibank Meryll Lynch-Bank of America, ՎՏԲ բանկ և այլն)*
- *ԱՄՀ, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների բարձր մակարդակի ներկայացուցիչների միջև քննարկումներ*
- *Տարածաշրջանային տնտեսական ակնարկ*
- *Հանդիպում ՀԲ-ի գործադիր տնօրեն Ֆրանկ Հիմսկերկի հետ*
- *Հանդիպում ՀԲ-ի փոխնախագահ Սիրիլ Մյուլլերի հետ*
- *Հանդիպում ԱՄՀ-ի գործադիր տնօրեն Էնթոնի դը Լանոյի և գործադիր տնօրենի տեղակալի Ռիչարդ Դուրնբոշի հետ*

- *Հանդիպում ԱՄՀ Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի հարցերով վարչության պետ Ջիհադ Ազուրի հետ*
- *Հանդիպում ԱՄՀ հարկաբյուջետային հարցերով վարչության հետ*
- *Հանդիպում Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ*

6. Քննարկված թեմաները, հանդիպումները՝

Արժույթի միջազգային հիմնադրամի/Համաշխարհային բանկի տարեկան հանդիպումները հնարավորություն են տալիս բարձրաստիճան հարթակում համաշխարհային ֆինանսատնտեսական միջավայրում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ քննարկումներ իրականացնել, երկկողմ հանդիպումներ ունենալ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, վարկանիշային և այլ կազմակերպությունների պատվիրակների և ներկայացուցիչների հետ համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ, ինչպես նաև մասնակցել գլոբալ մարտահրավերներին առնչվող գիտաժողովներին և միջոցառումներին:

Այս համատեքստում 2017թ. տարեկան հանդիպումների օրակարգը խիստ հագեցած էր և ընդգրկում էր բազմաթիվ հանդիպումներ, կլոր-սեղանի ձևաչափով քննարկումներ, ճեպազրույցներ, միջոցառումներ և մամլո ասուլիսներ:

1) <u>ԱՄՀ/ՀԲ պլենար նստաշրջան:</u> Տարեկան հանդիպումների շրջանակներում միջոցառումներին մասնակցությունը մեկնարկել է Արժույթի Միջազգային Հիմնադրամի և Համաշխարհային բանկի պլենար նստաշրջանով, որին ներկա էին աշխարհի ավելի քան 180 երկրների պատվիրակություններ: Նիստի ընթացքում ելույթներով հանդես են եկել ՀԲ խմբի նախագահ Ջիմ Յոգն Կիմը և ԱՄՀ-ի կառավարիչ-տնօրեն Քրիստին Լագարդը:

Ջիմ Յոնգ Կիմն անդրադարձել է գլոբալ տնտեսական հիմնախնդիրներին, որոնց ներկայումս բախվում են երկրները և կարևորել է մարդկության կյանքի բարելավման ուղղությամբ միասնական օրակարգի ձևավորման անհրաժեշտությունը: Նա նաև նշել է Համաշխարհային բանկի ներկա առաջնահերթությունները, որոնք են՝

ներառական և կայուն տնտեսական աճ, ավելի շատ և ավելի արդյունավետ ներդրումներ մարդկային կապիտալում, հատկապես կոնսոլիդացիոն հարկաբյուջետային քաղաքականության իրականացման շրջափուլում: Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարիչ-տնօրեն տկն. Լագարդն իր ելույթում անդրադարձ է կատարել մարդկանց միջև անհավասարությունների վերացմանը, կլիմայի փոփոխությանն և կոռուպցիային առնչվող խնդիրներին և կոչ արել բոլոր երկրներին միավորել ջանքերը բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ:

2) ՎՏԲ բանկի, «Merill Lynch-Bank of America»-ի, «CitiBank»-ի ներդրողների և ֆինանսական վերլուծաբանների, «Raiffeisen» բանկի, «JP Morgan» և «Deustche Bank» ներդրումային բանկերի, Չինական առևտրի և արդյունաբերական բանկի ներկայացուցիչների հետ հանդիպումներ

Վերոնշյալ հանդիպումների շրջանակներում իմ կողմից ներդրողներին է ներկայացվել ՀՀ ներկա մակրոտնտեսական իրադրությունը, հարկաբյուջետային կոնսոլիդացիոն քաղաքականությունը, հարկաբյուջետային կանոնի վերանայմանն ուղղված քայլերը և նոր կանոնի փիլիսոփայությունը, Արժույթի միջազգային հիմնադրամի հետ նոր ծրագրի շուրջ տեղի ունեցող քննարկումները և եվրապարտատոմսերի տեղաբաշխմանն առնչվող հարցեր: Նաև նշվել է, որ 2017թ. և 2018թ. եվրապարտատոմսերի թողարկում ՀՀ կողմից չի նախատեսվում: Ներդրողների կողմից հնչեցին մի շարք հարցադրումներ, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

Չինական առևտրի և արդյունաբերական բանկի հետ հանդիպման ընթացքում չինական կողմից առաջարկվեց քննարկել չինական շուկայում տեղական արժույթով պարտատոմսերի թողարկման հարցը, և նշվեց, որ վերջին տարիներին չինական շուկա են մուտք գործել Հունգարիան և Լեհաստանը, որոնք հաջող գործունեություն են ծավալում և վերջիններիս փորձին արժե ծանոթանալ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ չինական կողմը պայմանների առաջարկ կներկայացնի, իսկ հայկական կողմն ուսումնասիրելուց հետո կարձագանքի:

«Raiffeisen» բանկի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում բանկի կողմից որպես առաջատար կառավարիչ հանդես գալու առաջարկ հնչեց: Այս առնչությամբ բանկի կողմից առաջարկվեց մասնակցել հաջորդ՝ 2018թ. հունվարին կայանալիք ակտիվների կառավարիչների հետ հանդիպմանը, որտեղ Հայաստանը հնարավորություն կունենա ներկայացնելու իր մակրոտնտեսական իրավիճակն ու տնտեսության զարգացման հիմնական միտումները:

3) <u>Մուդիս վարկանիշային կազմակերպության ներկայացուցիչների հետ հանդիպում</u>: Հանդիպման ընթացքում ներկայացրել եմ ՀՀ տնտեսական իրավիճակը. ՀՆԱ-ի աճի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող ՀՀ տնտեսության ճյուղերը, մակրոտնտեսական իրավիճակի վրա ազդող արտաքին շոկերն ու ազդակները, հարկաբյուջետային կանոնի վերանայման շուրջ վերջին զարգացումները: Հանդիպման շրջանակներում իմ կողմից ընդգծվել է, որ վարկանիշային կազմակերպությունների դերը մեծ է երկրների տնտեսություններում արտաքին ներդրումների ներգրավման առումով և առաջարկեցի համատեղ ջանքեր գործադրել այդ ուղղությամբ:

4) <u>Լյուքսեմբուրգի ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ հանդիպում</u>: Հանդիպման շրջանակներում վերջինիս կողմից անհանգստությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ Լյուքսեմբուրգը կարող է դիտարկվել որպես օֆշորային գոտի՝ համաձայն համապատասխան ՀՀ կառավարության որոշման: Իմ կողմից ներկայացվեց համապատասխան պարզաբանում, որ անհանգստությունները որոշման մեջ տեղ գտած ձևակերպումների մեկնաբանման արդյունք կարող են լինել միայն և վերոնշյալ որոշման տրամաբանությունն այն է՝ սահմանել այն երկրների ցանկը, որտեղ ուղղակի գործում է այլ հարկային ռեժիմ: Նաև նշեցի, որ որոշման ձևակերպումները նոր չեն այդ համատեքստում և կիրառության մեջ են դեռևս 2000-ական թվականներից: Ինչ վերաբերվում է որոշմամբ առաջացած տարընթերցմանը, ապա տեղեկացվեց որ հայկական կողմից կձեռնարկվեն

անհրաժեշտ փոփոխություններ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման մեջ և այդ մասին կտեղեկացվի բոլոր գործընկերներին, որոնք ունեն նման մտահոգություններ:

5) <u>Մասնակցություն Տարածաշրջանային տնտեսական ակնարկի շնորհանդեսին</u>: Շնորհանդեսին ներկայացվեցին Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի տնտեսական տարածաշրջանային զարգացումներն ու հիմնական տնտեսական միտումները, որոնք ուղեկցվում էին նաև համապատասխան վիճակագրական տվյալներով: Այս համատեքստում հարկ է փաստել, որ Հայաստանը տնտեսական հիմնական ցուցանիշների առումով բավականաչափ լավ դիրք է զբաղեցնում տարածաշրջանում, սակայն դեռևս անհրաժեշտ են բարեփոխումներ բիզնես միջավայրի, ֆիսկալ կառուցվածքի և ենթակառուցվածքների ոլորտներում:

6) <u>Հոլանդական ընկերակցային խմբի հանդիպում:</u> Հանդիպման ընթացքում ընկերակցային խումբը ներկայացնող գործադիր տնօրեն Ֆրենկ Հիմսկերկի կողմից հայտարարվեց, որ Համաշխարհային բանկի խումբը նախատեսում է ավելացնել իր կանոնադրական կապիտալը և ներկայումս առկա տեսակարար կշիռը պահպանելու համար ընկերակցային խմբի անդամ երկրները նույնպես պետք է վճարեն լրացուցիչ գումարներ և Հայաստանի Հանրապետությունը պետք է վճարի 17 մլն ԱՄՆ դոլար կանխիկ գումար: Հանդիպմանը մասնակցող հայկական պատվիրակության կողմից նշվեց, որ անհրաժեշտ ու կարևոր է հասկանալ, թե ընդհանուր առմամբ դա ինչ կարող է տալ ընկերակցության անդամ երկրներին, քանի որ նման չափով գումար տրամադրելու համար անհրաժեշտ է, որպեսզի հանրությանը նույնպես պատշաճ կերպով տեղեկացվի դրա անհրաժեշտությունն ու հիմնավորվածությունը: Ընկերակցային խմբի հանդիպման շրջանակներում նաև ամփոփվեցին իրականացված աշխատանքները և նշվեց, որ ընկերակցային խմբի հաջորդ հանդիպումը տեղի կունենա Խորվաթիայում:

7) <u>Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի բարձրաստիճան պաշտոնյաների հետ երկկողմ հանդիպումներ:</u>

Համաշխարհային բանկի հոլանդական ընկերակցային խմբի գործադիր տնօրեն Ֆրենկ Հիմսկերկի հետ հանդիպում: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Երկրի վերլուծության փաստաթղթին առնչվող հարցեր և կարևորվեց, որ վերջինս պետք է համահունչ լինի ՀՀ կառավարության ներկա ծրագրին: Քննարկվող հարցերի թվում էր ՀՀ կառավարության ներկա կոնսոլիդացիոն հարկաբյուջետային քաղաքականությունը, որի շրջանակներում ներկայացվեց հայկական կողմից վերջինիս հիմքում դրվող հիմնական փիլիսոփայությունը և սկզբունքները: Քննարկվեց նաև «Պարտքը բնապահպանության դիմաց» նախաձեռնության վերջին զարգացումները և կարևորվեց ՀԲ տեխնիկական առաքելության կողմից ճանապարհային քարտեզի նախագծի հնարավորինս արագ վերջնականացումն ու տրամադրումը հայկական կողմին: Միաժամանակ հայկական կողմից ընդգծվեց նախաձեռնության շրջանակներում հետագայում լրացուցիչ տեխնիկական աջակցության ներգրավման անհրաժեշտությունը, որը հնարա-վորություն կտա որոշակիացնել անհրաժեշտ բնապահպանական ծրագրերը և բանակցություններ սկսել այն երկրների հետ (ՌԴ, Ճապոնիա, ԳԴՀ, Ֆրանսիա, ԱՄՆ), որոնց հետ համապատասխան գործարքներ կարող են կնքվել: Ֆ. Հիմսկերկն իր հերթին նշեց, որ համապատասխան երկրների գործադիր տնօրենների հետ ինքը նույնպես անհրաժեշտ քննարկումներ կիրականացնի:

Համաշխարհային բանկի նախագահի տեղակալ Սիրիլ Մյուլլերի գլխավորած պատվիրակության հետ հանդիպում: Հանդիպման ընթացքում Համաշխարհային բանկի կողմից բարձրացվեցին մի շարք հարցադրումներ կապված Երկրի վերլուծության, ՀՀ ներկա տնտեսական, այդ թվում՝ հարկաբյուջետային իրավիճակի և իրականացվող բարեփոխումների վերաբերյալ: Քննարկվող հարցերի թվում էր նաև ՀԲ-ի հետ ՀՀ ներկա պորտֆելի ծրագրերի իրականացման ընթացքը,

«Պարտքը բնապահպանության դիմաց» նախաձեռնությանն առնչվող հարցերը: Հայկական կողմից բարձրացվեց *Երկրի ռազմավարական փաստաթղթի* վերջնականացման հարցը, որն ակնկալվում է ստանալ մինչև 2018թ. մարտը: Քննարկվեց նաև Հայաստանի՝ ՀԲ կողմից կիրառվող Քաղաքականության վրա հիմնված երաշխիքի գործիքից օգտվելու հնարավորության հարցը:

Արժույթի Միջազգային Հիմնադրամի հոլանդական ընկերակցային խմբի գործադիր տնօրեն Էնթոնի Դե-Լանոյի հետ հանդիպում: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ֆիսկալ կանոնի վերանայման ուղղությամբ իրականացված և ներկայումս ընթացքի մեջ գտնվող աշխատանքները: Հայկական կողմից բարձր գնահատվեց ԱՄՀ տեխնիկական աջակցության թիմի աշխատանքը ֆիսկալ կանոնների վերանայման գործընթացում ՀՀ-ին ցուցաբերվող աջակցության շրջանակներում: Անդրադարձ կատարվեց ԱՄՀ նոր ծրագրին և նշվեց, որ ՀՀ-ն հաջողությամբ է ավարտել նախորդ ծրագիրը և նոր ծրագրի շուրջ գործընթացն արդեն կարող է մեկնարկել ս.թ. նոյեմբեր-դեկտեմբերին: Ընդգծվեց նաև, որ նոր ծրագիրը կարևոր է, որ լինի ՀՀ կառավարության ծրագրին համահունչ և ուղղված լինի ներառական աճ ապահովելուն: Անդրադարձ կատարվեց նաև ԱՄՀ կողմից ՀՀ–ին տարբեր ուղղություններով տեխնիկական աջակցություն տրամադրելուն:

Հանդիպում ԱՄՀ Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի Դեպարտամետի տնօրեն Ջիհադ Ազուրի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց ԱՄՀ նոր ծրագրին դիմելու և վերջինիս մեկնարկի հետ առնչվող մանրամասներ: Նշվեց նա, որ չնայած ԱՄՀ-ի տեխնիկական աջակցության ռեսուրսները սահմանափակ են, այդուհանդերձ միջոցներ կհատկացվեն հայկական կողմին՝ նախաձեռնված բարեփոխումների, հատկապես հարկաբյուջետային կանոնի վերանայման ուղղությամբ:

ԱՄՀ հարկաբյուջետային հարցերի դեպարտամենտի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկված առանցքային հարցը ՀՀ հարկաբյուջետային կանոնի վերանայման գործընթացն էր և այդ գործընթացում հետագա տեխնիկական

աջակցության հնարավորությունները: Մասնավորապես՝ քննարկվեցին նաև ֆիսկալ կանոնի վերանայման գործընթացի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով տարբեր հարցերով ներկայացվելիք զեկույցների ձևաչափերը և հարկաբյուջետային կանոնի շրջանակներում բացառություններին առնչվող հարցերը, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է դիտարկել միջազգային համապատասխան փորձը: Դեպարտամենտի ներկայացուցիչները նշեցին, որ վերոնշյալ ուղղություններով առկա է միջազգային փորձ, որի ուսումնասիրման ուղղությամբ աջակցություն կտրամադրվի հայկական կողմին: Միևնույն ժամանակ, դեպարտամենտը պատրաստակամություն հայտնեց հարկային քաղաքականության (նաև գույքահարկի գծով բարեփոխումներ) բարեփոխումների ուղղությամբ աջակցություն տրամադրել հայկական կողմին:

8) Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC) ներկայացուցիչների հետ հանդիպում: Քննարկվեցին Հայաստանի տնտեսական ընդհանուր վիճակը, կառավարության կողմից նախաձեռնված բարեփոխումների հիմնական ուղղությունները և ակնկալվող արդյունքները, մասնավորապես՝ բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումները, պետություն-մասնավոր հատված համագործակցության բարելավման նպատակով համապատասխան նախաձեռնությունները և այլ հարցեր: Ուշադրություն հրավիրվեց տուրիզմի և ագրոբիզնեսի ոլորտներում գործունեություն ծավալելու հնարավորությունների վրա: Նշվեց, որ հատկապես կարող է գրավիչ լինել գինու արտադրության ոլորտը:

Գրեթե բոլոր հանդիպումների ընթացքում հնչեցվեց ՀՀ ֆինանսների նախարարության որդեգրած սկզբունքն առ այն, որ պոտենցիալ ներդրողների և վարկանշային կազմակերպությունների հետ տարվելու է թափանցիկ, մշտական և հետևողական աշխատանք՝ նպատակ դնելով վերջիններիս անմիջականորեն ներկայացնել ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը, ՀՀ կառավարության բարեփոխումներն ու առանցքային ծրագրերը:

Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի բարձրաստիճան պաշտոնյաների և բոլոր ներդրողների հետ իրականացվել են կառուցողական քննարկումներ:

7. **Ձեռք բերված պայմանավորվածությունները**

- Չինական առևտրի և արդյունաբերական բանկի կողմից կտրամադրվեն տեղական արժույթով պարտատոմսերի թողարկման պայմանները, որի վերաբերյալ հայկական կողմը կներկայացնի դիրքորոշում:
- «Raiffeisen» բանկի կողմից 2018թ. հունվարին կայանալիք ակտիվների կառավարիչների հետ հանդիպման առաջարկի վերաբերյալ հայկական կողմը կներկայացնի համապատասխան դիրքորոշում:
- Օֆշորային գոտիների (երկրների) ցանկը սահմանելու վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ փոփոխություններ իրականացնելուց հետո համապատասխանաբար կտեղեկացվի լյուքսեմբուրգյան կողմին:
- ՀԲ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ որոշվեց համատեղ ջանքեր գործադրել *Երկրի ռազմավարական փաստաթղթի* վերջնականացման ուղղությամբ, մասնավորապես՝ փաստաթղթի նախագիծը համաձայնեցնել մինչև 2018թ. մարտ ամիսը և մինչև ապրիլ ամիսն ունենալ վերջնականացված տարբերակ:
- ՀԲ-ի հետ աշխատանքներ իրականացնել Քաղաքականության վրա հիմնված երաշխիքի գործիքից Հայաստանի օգտվելու ուղղությամբ:
- «Պարտքը բնապահպանության դիմաց» նախաձեռնության առումով որոշվեց, որ ՀԲ-ն կառաջնորդի Հայաստանի հետ գործընթացը, ՀԲ-ն լրացուցիչ կտեղեկացնի հավելյալ տեխնիկական աջակցության տրամադրման հարցը, գործադիր տնօրեն Ֆրենկ Հիմսկերկը հնարավոր գործարքի կողմ դիտարկվող

երկրների գործադիր տնօրենների հետ ինքը նույնպես անհրաժեշտ քննարկումներ կիրականացնի:

- ԱՄՀ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց ԱՄՀ-ի հետ նոր ծրագրից օգտվելու գործընթաց սկսել ս.թ. նոյեմբեր-դեկտեմբերին:
- ԱՄՀ-ն ՀՀին տեխնիկական աջակցություն կցուցաբերի ՀՀ հարկաբյուջետային կանոնի վերանայման գործընթացի շրջանակներում Ազգային ժողով ներկայացվելիք զեկույցների ձևաչափերի և հարկաբյուջետային կանոնի շրջանակներում բացառությունների, ինչպես նաև հարկային բարեփոխումների ուղղությամբ: ԱՄՀ առաքելությունը կայցելի Հայաստան տեղում ծանոթանալու հայկական կողմի կարիքներին, հայկական կողմը կձևակերպի կոնկրետ կարիքներ և տեսակոնֆերանսի ձևաչափով քննարկումներ կանցկացվեն ԱՄՀ-ի հետ:

8. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյան

9.Ստորագրությունը, ամսաթիվը

20.10.2017թ.